վորաց ձերոց և որք ծառայեն ձեզ, զսահմանեալ հոգոն մի պակասեցուցանէք, զի զրկանք մեջ է այն անիրաւութիւնս քանզի որպէս որպէս նոքա պարտական են վասն պարգևածն որ ի ձենջ զարիւնս իւրեանց հեղուլ վասն ձեր նոյնպէս և դուք պարտիք զխոստացեալ թոշակսն նոցին հատուցանել անթերի»[53]։

Դիմելով զինվորներին գրում է. «Եւ մի առաւել քան զրամայելն ձեր արնիցէք. ըստ սրբոյ Մկրտչին խրատու այլ թոշակօքն ձեր բավականաշչիք։ Նոյնպէս և զորս քան զսահմանեալ հոգոն ձեր անիրաւաբար և բռնութեամբ յաղքատաց յափշտակէք. կամ ի տէրանց ձերոց ընչից գողանայք. ունիք տալ զվճառն առանց՝ պակասութեան յաւուրն դատաստանի»[54]։

Հոգ բառը ըստ Նոր Հայկազյան բառարանի նշանակում է ռոճիկ, թոշակ։ Հոգ տերմինը հետնադարյան հայերենի մեջ ավելի սովորական և ժողովրդին ավելի հասկանալի բառ էր, քան թոշակը։ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» թոշակ բառի դեմ իբրև բացատրություն լուսանցքի վրա գրված է հոգ[55]։ Մատթեոս Ուռհայեցին մի անգամ օգտագործել է հոգակեր տերմինը[56]։ Սմբատը իր «Դատաստանագրքում» հոգվոր բառը օգտագործում է վարձով աշխատող անձի իմաստով[57]։

Լատիներեն erogatia բառը ծագում է erogo ծախսել, դրամ բաժանել բայից փոխ է առել հունարեն 'ρόγο ձևը, որ նշանակում է «ժողովրդին բաշխված դրամ» կամ «զինվորներին վճարված թոշակ՝ տարեթոշակ»։ «Թուղթ Ընդհանրական»-ում Ներսես Շնորհալին հոգ և թոշակ բառերը օգտագործել է փոխարինելով մեկը մյուսին և այդտեղից էլ հոգը նշանակում էր թոշակ, որը տրվում էր զինվորներին և հեծելվորներին զինվորական ծառայության դիմաց։

Պրոֆ. Գ. Միքայելյանը, հիմնվելով «Թուղթ Ընդհանրականի», «նոյնպէս և զորս քան զսահմանեալ հոգոն, ձեր անիրաւաբար և բռնութեամբ յաղքատաց յափշտակէք» վկայության վրա, հանգել է այն ճիշտ եզրակացության, որ հոգը ռուսական ֆեոդալիզմի «кормление» տերմինին է համապատասխան, և որ դա գյուղական բնակչության կողմից բանակի զինվորներին վճարված պարտադիր հարկերից մեկն էր հանդիսանում[58]։

Հեծելվորները Կիլիկյան Հայաստանում իրավունք ունեին օգտվելու վանքի եկամուտներից այն դեպքում, երբ նրանք գտնվում էին ճանապարհորդության մեջ, անշուշտ, ռազմական արշավանքների ընթացքում։ Անհերքելի է, որ վանքի եկամուտները ստացվում էին ճորտ գյուղացու կամ առհասարակ կախյալ գյուղացիների աշխատանքով կամ նրանցից գանձված հողային ռենտաներով։ Սմբատն այդ մասին գրում է, «սահմանէ յաւրինացն՝ որ թէ թագաւոր և թէ իշխան և թէ հեծելվոր, որ ի ճանապահ կենայ ու վանք պատահի նա իր հաւն իջնու, չիջնու ի գեղ և վանքն տայ զպէտքն..»[59], այսինքն եթե վանք չպատահի, նրա մասին պետք էր հոգար գյուղական բնակչությունը։

---

53 «Թուղթ Ընդհանրական», 1865, էջմիածին, էջ 100։

54 Նույն տեղում, էջ 105—106։

55 Բ ա ս տ ա մ յ ա ն Վ., Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 82։

56 Մատթէոսի Ուռհայեցւոյ, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 21։

57 Смбат Спарапет, Судебник, стр. 17.

58 Г. Микаелян, История Киликийского Армянского государства, Ереван, 1952, стр. 252.

59 Смбат Спарапет, Судебник, стр. 51.